

## «ԱՆԱՆԻԱՅԻ ՇԻՐԱԿԱՅԻՈՅ (ՇԻՐԱԿՈՒՆԻՈՅ) ՀԱՄԱՐՈՂԻ ՇԼԲ ԿԱՐԳ»-Ը<sup>1</sup>

**ՈԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

Անանիա Շիրակացու տոմարական մատյանի և նրա անվանը վերաբերվող խնդիրները հայագիտության մեջ դրվել են վերջերս<sup>2</sup>: Նշենք միայն, որ 1885 թվականին, երբ Ստ. Մալխասյանցը հրատարակեց Ասողիկի «Պատմութիւն Տիեզերական»-ի համեմատական բնագիրը և Ա. Շիրակացու «Հրաշազան Քննիկոնը» փոխարինեց «Հրաշազան քրոնիկոնով», հայգետները (Գ. Խալաթյանց, Բ. Սարգսյան, Կ. Մարկվարտ, Ա. Հ. Աբրահամյան, Հ. Անասյան, Հ. Բարթիկյան, Ա. Մաթեոսյան Գ. Աբգարյան) ուղղորդվեցին փնտրելու Ա. Շիրակացու ժամանակագրությունը՝ իբրև առանձին աշխատություն, հայտնելով բազմազան կարծիքներ, բայց ոչ իբրև տոմարական - տոնացույցային ժողովածու: Ուշագրավ է, որ Գ. Խալաթյանցը առկա ժամանակագրության մի մասը համարել է Հիպոլիտոսի հայերեն թարգմանություն, իսկ մյուս մասը՝ «Կայսերաց գիրքը», վերագրել է հնագույն ձեռագրի պատվիրատու և գրիչ Դավիթ քահանային, թեև, ինչպես կտեսնենք Դավիթ քահանայի հիշատակարանից, նա ընդամենը «զշարադրութիւն տոմարաց»-ից, այսինքն՝ տոմարական մատյանից է ընդօրինակել այն և այլ նյութեր, որոնց մասին կդրենք հետազա շարադրանքում, և վերջում, հիմնվելով Ա. Շիրակացու՝ Զատկացուցակ կազմելու հիշատակարանում վկայված «ՇԼԲ կարգի» վրա, կարծել է, թե նրա ժամանակագրությունը գտնված չէ: Մինչդեռ կտեսնենք, որ «ՇԼԲ կարգը» կամ Շ-եակը եղել է Ա. Շիրակացու տոմարական-տոնացույցային ժողովածոյի վերնագիրը: Ասենք նաև, որ Յ. Մարկվարտը «Քննիկոնի» տակ հասկացել է Ա. Շիրակացու ամբողջ գիտական ժառանգությունը, որին հետևել է Ա. Մաթեոսյանը: Վերջապես Ա. Աբրահամյանը Ա. Շիրակացու տոմարական ժողովածոյի առանձին բնագրերը դիտել է իբրև նրա առանձին աշխատություններ, Ասողիկի վկայության հիման վրա կռահել է, թե Ա. Շիրակացին դրել է մի առանձին տոմարական մատյան, իսկ ժամանակագրությունը վերագրել Ա. Շիրակա-

<sup>1</sup> Սույն հոդվածը հրատարակվում է 13-6D381 ծածկագրով՝ «Դրվագմեր հայ աստվածաբանական մտքի պատմությունից» թեմայի շրջանակում:

<sup>2</sup> Ո. Յ. Կարդանյան, Գ. Յ. Կարախանյան, Անանիա Շիրակացին և նրա «Քննիկոնը», Աճեմյան մատենաշար, Ա, Եր., 2002, էջ 37-117, Ո. Կարդանյան, Լ. Սարգսյան, Գ. Սիմոնյան, «Ժամանակական կանոնի»՝ Արարչության թվականության համակարգերի և Ա. Շիրակացու հաշվման սկզբունքների փոխառնչակցությունները, Աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք, Զ, Եր., 2011, էջ 21-47:

ցուն՝ իբրև քրոնիկոն՝ չմտածելով, որ նրա տոմարական մատյանի անունը «Քննիկոն» է:

Դավիթ քահանան 981/82 թթ. իր և որդու կողմից ընդօրինակված ձեռագրի 1-ին ժողովածոյի հիշատակարանում գրում է, որ ժողովածուն սկսում է Շեակ Զատկացուցակով<sup>1</sup>, որը կիսատ է, ուստի խորագիր չունի: Այն սկսում է հոռմեացոց 484 Շեակ թվականով (= 1056 թ.) և ավարտում 550-ով (= 1102 թ.), իսկ հայոց 511 հայոց թվականով (= 1062/63 թթ.) և ավարտում 550-ով (= 1101/02 թթ.), այսինքն՝ հոռմեացոց և հայոց շարժական տոմարի շարքերն ունեն ընդամենը 40 տարիների համարժեքներ: Այդքանը կանոնների հետ լիովին բավարար է, որպեսզի վերականգնենք Շեակը 1-550 տարիների սահմաններում, ինչն իրականացվել է<sup>2</sup>:

Դատելով Ա. Շիրակացու Զատկի մեկնության վերջում զետեղված հիշատակարանից, այն է՝ «Եւ վասն այնորիկ.... Եւ զատիզկին մեկնեցի զմի մի կարգ առ մի մի տարի»<sup>3</sup> Շեակը պետք է դրվեր հիշատակարանից հետո: Այստեղից պարզ է դառնում, որ Զատկի մեկնությունից հետո են դրվել Շեակն ու 28 կանոնները, իսկ ժողովածոյում այս վիճակով դրված է սկզբում, թեև հիշատակարանը հուշում է այլ հերթականություն. «Ես Դաւիթ քահանայ ցանկացա[յ] լուսաւոր եւ աստուծազան վարդապետութեան սրբոյն Աթանասի, որ ընդդէմ արիանոսաց եւ հրէից՝ յաղագս տնաւրէնութեան Աստոածն բանի ծանոյց երիս անձնաւորութիւն եւ մի աստոածութիւն: (Այդ) Ես ըստ իմոյ նոաստութեանս եւ աղքատ մտաց(ս) ի մի վայր բովանդակեցայ առեալ եւ սուղ ինչ ի սրբոյն Անդրէասի վարդապետութենէն եւ յաղագս նորին նմանեաց զշարադրութիւն տոմարաց՝ հաւաքեցի ի գիրս յայս, ի հիշատակ ինձ եւ իմոց կենդանեաց եւ ննջեցելոց, եւ ի ժառանգութիւն որդւոյ իմոյ Ղուկասու, որ գծագրեացս իսկ զսա: ..... Եւ է նորոգումն սորա ի ՆԼ (= 981/82 թթ.) թուականութեանս Հայոց»<sup>4</sup>:

Դավիթ քահանայի հիշատակարանում հստակ ասվում է, որ 1-ին ժողովածոյում սկզբից ընդօրինակել է հատկապես Աթանաս Ալեքսանդրացու «ընդդէմ արիոսականաց եւ հրէից»-ը, այլ հեղինակների աշխատանքներ, ինչպես երեսում է գրչագրի այլ նյութերից «ի մի բովանդակեցայ», որոնք այսօրվա վիճակով, բարեբախտաբար, գտնվում են ձեռագրի այլ մասերում: Աթանաս Ալեքսանդրացու երկու գործերը, որոնք վկայված են Դավիթ քահանայի հիշատակարանում, գտնվում են հետեւյալ վերնագրերի տակ՝

<sup>1</sup> Զեռ. թիվ 2679, էջ 1 ա-2 թ:

<sup>2</sup> Աստվածաբանության ֆակ.-ի Տարեգիրք, Դ, էջ 26-77:

<sup>3</sup> Զեռ. թիվ 2679, էջ 28 թ - 29 ա:

<sup>4</sup> Զեռ. թիվ 2679, էջ 154 ա, տես նաև Մատեան գիտութեան եւ հաւատոյ Դաւիթի քահանայի, աշխ.՝ Ա. Մաթևոսյանի, էջ 30:

1. «Հնդկէմ ասացութիւն սրբոյն Աթանասի եպիսկոպոսի Ալէքսանդրաց ուղղափառի եւ Արիանոսի հերձոածողի. Յաղագս Աստոածութեանն որդւոյ վիճաբանութիւնք»<sup>1</sup>:

2. «Սրբոյն Աթանասի եպիսկոպոսապետին Աղէքսանդրու եւ Զաքեի՝ առն Հրէի. Հարցմունք եւ պատասխանիք եւ տուր եւ առք վիճմանց»<sup>2</sup>:

Այդ մասին վերաբերող նյութերը գրչագրում զբաղեցնում են 79 թ-155 թ էջերը, որոնց վերլուծությունը մեր խնդրից դուրս է. միայն նշենք, որ Դավիթ քահանայի գրչագրի 1-ին մասի հարցը պարզ է, իսկ 2-րդի մասին Դավիթ քահանան գրում է. «առեալ եւ սուղ ինչ ի սրբոյն Անդրէասի վարդապետութենէն եւ յայլոց նորին նմանեաց զշարագրութիւն տոմարաց՝ հաւաքեցի ի գիրս այս»:

Ասենք, որ գրչագիրը 13-րդ դարի սկզբների և 16-րդ դարի վերջերի պատկերն է «զշարագրութիւն տոմարաց»-ից, այսինքն՝ տոմարական ժողովածոյից է Դավիթ քահանան ընդօրինակել նյութեր, որոնք այսօրվա վիճակով ամբողջական չեն ու սկսում են Շ-եակ Զատկացուցակով, որը, ինչպես նկատեցինք, կիսատ է<sup>3</sup>: Դավիթ քահանայի «զշարագրութիւն տոմարացն» ավարտվում է տոնացույցային-տոմարական հարց ու պատասխանով, որը վերնագրված է «Հարցմունք հայրապետին Անտիոքայ ընդ Խոսրով հայոց վարդապետ. Յաղագս զԾնունդ առնելոյ»<sup>4</sup>: Իսկ գրչագրի սկզբում եղել են Անդրեասի Զատկի մեկնությունը, 17 կանոնները և հիշատակարանը: Այլ խոսքով՝ ամբողջանում են գրչագրի 2-րդ մասի նյութերը նույնպես և պարզվում է ամբողջ ընդօրինակության պատկերը, այն է՝ Դավիթ քահանայի գրչագրի 2-րդ մասի նյութերն սկսել են Անդրեասի վարդապետության մասին պատմող նյութերով և ավարտվել Խոսրով վարդապետի հարց ու պատասխանիքով, որը եղել է նախօրինակ տոմարական ժողովածոյի վերջին բնագիրը, հետևապես պետք է պարզել՝ հարց ու պատասխանի գրման ժամանակը:

Խոսրով վարդապետի հիշյալ բնագիրն առաջին անգամ «զշարագրութիւն տոմարաց»-ից հրատարակել է Գ. Հովսեփյանը և վերագրել 8-րդ դարում ապրած Հեղինակի (ըստ Գ. Հովսեփյանի՝ Խոսրովիկ թարգմանիչ):

Անկասկած է, որ Գ. Հովսեփյանի հրատարակած Դ, Ե և Զ բնագրերը Խոսրով վարդապետի նամակներն են՝ գրված Մանագկերտի 726 թվականի

<sup>1</sup> Զեռ. թիվ 2679, էջ 103 թ – 126 թ:

<sup>2</sup> Զեռ. թիվ 2679, էջ 126 թ – 145 ա:

<sup>3</sup> Զեռ. թիվ 2679, էջ 1 ա-2 թ:

<sup>4</sup> Զեռ. թիվ 2679, էջ 76 ա – 79 թ:

<sup>5</sup> Գարեգին Վ. Յովսեփեան, Խոսրովիկ թարգմանիչ (ը դար), Վարդարշապատ, 1894, թն. հր., էջ 185-197:

ժողովից հետո և Անտիռքի Աթանաս Յ-րդ պատրիարքի մահվանից՝ 740 թվականից առաջ: Հնդ որում, Դ-ն և Զ-ն Անտիռքի Աթանաս պատրիարքին, իսկ Ե-ն՝ «առ տէր Սարգիս եպիսկոպոս Գերադիկորայ»: Շայրակետերի թվերից ստանանք գրությունների միջին թվականը՝ 733 թ. ( $726 + 740 = 1466 : 2 = 733$ ): Սարգիս եպիսկոպոսին ուղղված թղթում ասվում է նաև, որ Սևերիոսի ու Յուլիոսի հետնորդները «Եւ կացին մնացին յայս գրի Մ (ամ՝ սակաւ կամ աւելի)» և ապա ցանկություն հայտնեցին Լուսավորչի փարախը մատնելուն՝ ըստ Գ. Հովսեփյանի վարկածի: Իսկ «յայս գիր» բառերը Հ. Սարգսյանն ընդունել է Հուստինիանոսի հրովարտակի տեղ «զոր հանեց յառաջին ամի գահակալութեան իւրոյ»<sup>1</sup>: Այդ հաշվով Սարգիս եպիսկոպոսին ուղղված թուղթը պետք է գրված լինի Հուստինիանոսի առաջին տարուց սկսած 200 տարի առաջ կամ հետո, որը 527 կամ  $527 + 1 + 200 = 727$  թ. կամ 728 թվականին: Այն հակասում է բնագրի տեղեկությանը: Մանազկերտի ժողովում 726 թվականին փորձ արվեց մտնելու Լուսավորչի փարախը, իսկ բնագրի մեջ Սևերոսը և Հուլիանոսը փախչում են Ալեքսանդրիայի մոտակայքը, որից հետո որոշ ժամանակ մնալուց հետո նոր միայն միմյանցից բաժանվում և ունենում հետնորդներ, իսկ Գ. Հովսեփյանի այս մտայնությամբ նամակը դնում է Մանազկերտի (726 թ.) քիչ հետո, այն է՝ 726/27 թթ.<sup>2</sup>: Սակայն այդ թվերինը 4-րդ նամակի համաձայն, գրված Աթանաս եպիսկոպոսին թէոդոտ(ոս)ն էր «ի Գերայ» (կամ Դերա՝ համարժեք Գերադեկորա՝ ըստ Սարգսին գրած նամակի) եպիսկոպոսը, ով մասնակցել է Մանազկերտի ժողովին, դեռ ավելին՝ հանդես է եկել իբրև միության հակառակորդ: Ուստի միջին 733 թվականից պետք է ստանալ «դրանց բաժանման» մոտավոր ժամանակը՝  $733 - 5/6 = 727/28 - 200 = 527/28$  թ., այսինքն՝ մոտ 27 թվականից  $5/6$  տարի հետո միայն աղանդավորները բաժանվել են իրարից և ստեղծել առանձին ուղղություններ, այն է մոտ  $527 + 6 = 533$  թ.: Մեր կարծիքով, 530-ական թվականները Հակոբիկյան եկեղեցու ստեղծման ժամանակն է և ոչ թե «դրանց բաժանման» ժամանակը, ինչը տեղի է ունեցել 518 թ. հետո:

Մենք միջին թվականի, այն է՝ 733 թվականին ենք դնում Դավիթ քահանայի «զշարադրությիւն տոմարաց» հատվածի նախագաղափարի ժամանակը և վերագրում Խոսրով վարդապետին: Ահա թե ինչու:

Հարց ու պատասխանի մեջ Անդրեասի մեկ կանոնի հղում կա՝

«Հ(արց). Եւ ուստի յայտ է, թէ յառաջ քան զթուստիանոս ի յունոարի Զ տաւնէին առ Կոստանդիանոսիւ:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 103:

<sup>2</sup> Գարեգին Վ. Յովսեփեան, Խոսրովիկ թարգմանիչ (Ը դար), Վարդարշապատ, 1894, թն. իր., էջ 106:

Պ(ատասխանի). ՅԱՆԴՐԻԽԱՍԻ ասացոածէն յայտնի է, զի այսպէս ասէ յերրորդում կանոնին Մ.ակին, թէ ամի ամի էժ երրորդն մարտի եւ է ապրեղի եւ Զ.երրորդին յունոարի. Յորում Յայտնութիւն Տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի միում աւուր հանդիպի....»:<sup>1</sup>

Հարց ու պատասխանի մեջ խոսվում է Անդրեասի 200-ամյա Զատկացուցակի «նա յաւրինեաց զշարադրութիւն տոմարին»<sup>2</sup> և Հրեական Զատկի քննադատության մասին, որի համար «ազգքն քո, զորոց ամբաստանէ երանելի Անդրեաս»<sup>3</sup>:

Ցույց ենք տվել, որ Անդրեասի 200-ամյակն ասորերենից հայերեն է թարգմանվել 429 թ. և մեր եկեղեցու կողմից օգտագործվել մինչև 552 թվականը, այնուհետև դուրս եկել շրջանառությունից: Ուստի հետագայում այն պետք է համառոտվեր՝ պահպանելով միայն անհրաժեշտ մասերը, մանավանդ այն պետք էր՝ միության հակառակորդներին համոզելու և մեր տեսակետները հիմնավորելու համար:

Դրանից հետո տեղեկություններ ենք գտնում Ա. Շիրակացու և Խոսրով վարդապետի մոտ: Պարզ է, որ վերջինս համառոտել ու հատվածներ է դրել իր տոմարական ժողովածոյի մեջ, որից օգտվել են Գևորգ Գառնեցի կաթողիկոսն ու Դավիթ քահանան, ով, սուղ ինչ վերցնելով Անդրեասի վարդապետությունից, ինչը սկզբի մասից պահպառում է, դրել է իր ընդօրինակության մեջ: Այդ համառոտված հատվածների մասին պատկերացում ենք կազմում 1973 թվահամարի տոմարական ժողովածոյից (ընդօրինակված 1342 թվին), որտեղ պահպանվել են Անդրեասի Զատկի մեկնությունը, 200-ամյակի հիշատակարանը և 17 կանոնները: Վերջիններս, հավանաբար, եղել են Խոսրով վարդապետի ժողովածոյի մեջ և փոխանցվել են սերնդից սերունդ: Դրա ապացույցը Անդրեասի Յ-րդ կանոնն է և 200-ամյակի ու Հրեական Զատկի մասին տեղեկությունները՝ պահպանված Խոսրով վարդապետի հարց ու պատասխանի մեջ: Վերջինս օգտվել է Սահակ կաթողիկոսի թարգմանած ու խմբագրած «ընթերցուածոց» գրքից, Հովհաննես Գաբեղենացուց, Անանիա Շիրակացուց, Ստեփանոս Սյունեցուց: Սակայն ուշագրավն այն է, որ նա հիշատակում է Շ-եակ «ՇկԲ (ուղղել՝ ՇԼԲ) ամի»<sup>4</sup> և նրա 19-ամյակի 1-ին՝ ապրիլի 4-ի լրման տարին, որը եղել է նաև Աղամի 1-ին և Քրիստոսի խաչելության տարի ևն: Բերենք այդ հարց ու պատասխանը:

«Հ(արց). Թագաւորն Կոստանդիանոս ընդէ՞ր փոխեաց զգատիկն ի կիւրակէն:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 189-190:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 189:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 188-189:

<sup>4</sup> Գարեգին Վ. Յովսեփեան, նշվ. աշխ., էջ 187:

Պ(ատասխանի). Զի զատիկն ինքն ի կիւրակէին էր, զի ի միաշաբաթւոջն յարեաւ ի մեռելոց զկնի հասարակելոյ տունջեան, եւ զի թժ երեակն ի հարկէ շուրջ ած էր զ Դժ երորդն զշաբաթովն եւ լուծանէր զպահսն....»<sup>1</sup>:

Այս մեջբերումը ցույց է տալիս, որ Խոսրով վարդապետի տոմարական ժողովածոյում եղել է Անանիա Շիրակացու Շ-եակը, որից Դավիթ քահանայի մոտ պահպանվել է «սուղ ինչ» հատվածներ:

«Հ(արց). Եւ զի՞նչ ասիցէ Յակովը եղբայրն Տեառն:

Պ(ատասխանի). Այսպէս ասէ. տաւն սրբոյ յայտնութեանն կատարի յունոարի ամսեան ի Զ, զոր յետ բազում ժամանակաց հաստատեալ կնքեաց երանելի կիւրեղ»<sup>2</sup>:

Անանիա Շիրակացու «ի Յայտնութիւն Տեառն եւ փրկչին մերոյ» հատվածում հասկանալի պատճառով ավելի մանրամասն է մեկնվում այդ խնդիրը<sup>3</sup>, որին կանդրադառնանք հետագա շարադրանքում, իսկ «Ժամանակական կանոնից» բերենք համարժեք հատվածը Հուստինիանոսի ժամանակի իրադարձությունների մասին, այն է՝ «....եւ որք ոչն հնագանդեցան հրամանի թագաւորքն՝ ընդունել զաղմկեալ ժողովոյն սահմանադրութիւնս, եւ հաւանեալ նորաձեւութեանն տաւնից եկեղեցական կարգաց, զոր հաստատեաց նաւրէնն Յուստիանոս ժողովեցելովքն ի Կոստանդնուպաւղիս, ի հինգերորդ ժողովին (553 թ.) զաւր առաքեալ հեղմունս արեանց արար ի տեղիս տեղիս: Եւ առաքեաց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, զի փոխեցեն զաւրն քառասնորդ նոիրեալ տաւնին ընծայման փրկչին մերոյ ի տաճարն. Եւ արացեն ըստ հրամանի թագաւորին, զոր եւ Երուսաղէմացւոցն պատմութեան հաստատեալ կայ այսպէս. Մեք որ յԵրուսաղէմ բնակեալ եմք, զոր տեսաք սքանչելիս, պատմեմք ձեզ, որ ի Հայքդ եք: Ի երեսներորդի երրորդ ամին (560 թ.) Կոստիանոսի սկսաւ սատանայ մարտնչել ընդ ճշմարտութեանն, եւ փոխեցին զսուրբ հաւատու. Եւ այդայդեցին զկարգս աւրինաց եւ տաւնից, զոր ետ Յակովը եղբայր Տեառն, քանզի մտեալ առաջի թագաւորին հրոայ ոմն հերետիկոս, գրգռեաց զթագաւորն վասն Տեառն ընդ առաջաց, թէ չէ պարտ թոյդ տալ Երուսաղէմացւոց արտաքոյ եկեղեցական կարգաց առնել զաւր Ծննդեան եւ զքառասնորդացն այդ որպէս ամենայն երկիրս Հոռոմոց տաւնէ, պարտ է նոցա տաւնել: Եւ թագաւորն ունկնդիր եղեւ. Եւ վաղվաղակի գրէ թագաւորասաստ հրամանաւ առ Ոստոքոս հայրապետ քաղաքին եւ առ ամենայն կղերս եկեղեցւոյ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 188:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 187-188:

<sup>3</sup> Տես Անանիա Շիրակացու Մատենագրությունը, էջ 263-291:

թէ զՏեառնընդառաջն՝ ըստ Ծննդեան (դեկտեմբերի 25) արացեք՝ փերուարի ամսոյ երկու....»<sup>1</sup>:

Կարծում ենք, որ այսքանից հետո պարզ է դառնում, որ Խոսրով վարդապետը առաջինն ստեղծեց մի տոմարական ժողովածու, որտեղ ընդգրկեց Անդրեասի տոմարից Հատվածներ, այսինքն Համառոտեց այն, և ընդգրկեց Անանիա Շիրակացու տոմարական-տոնացուցային ժողովածուն Համարյա ամբողջությամբ, մանավանդ, այն պետք էր միության Հակառակորդներին Համոզելու և մեր տեսակետները հիմնավորելու համար, իսկ վերջում դրեց իր Հարց ու պատասխանիքը, որից էլ «սուղ ինչ» ընդօրինակեց Դավիթ քահանան 981/82 թթ. իր կազմած «զշարադրութիւն տոմարաց»-ի մեջ, որը իր ժողովածոի 2-րդ մասն էր, ինչպես երեսում է դրա հիշատակարանից:

Այս դիտարկումները թույլ են տալիս ասելու, որ Դավիթ քահանան «զշարադրութիւն տոմարաց»-ում անմիջապես չի օգտվել Անանիա Շիրակացու տոմարական-տոնացուցային ժողովածոյից, այլ «սուղ ինչ» նյութեր է քաղել 8-րդ դարի 30-ական թվականներին ստեղծված տոմարական-տոնացուցային ժողովածոյից: Մակայն այդքանն էլ բավարար է վերականգնելու Անանիա Շիրակացու տոմարական մատյանը:

Դավիթ քահանայի «զշարադրութիւն տոմարաց»-ի և հետագայում կազմված ժողովածոյի (ձեռագրի այսօրվա վիճակը) հիմնական թերությունն այն է, որ Անանիա Շիրակացու տոմարական մատյանից «սուղ ինչ» նյութերը քաղելու են անսիստեմ, ըստ պահանջի ու ցանկության՝ չօգտվելով Անանիայի տեղեկություններից: Մանավանդ, Ա. Շիրակացին իր ժողովածուն գրելիս հստակ ասում է, թե որ նյութը որից առաջ կամ հետո է շարադրելու: Այնոամենայնիվ, Դավիթ քահանայի «զշարադրութիւն տոմարաց»-ը, ինչպես և նախագաղափար տոմարական ժողովածուն, որը հնագույնն է, այն հիմքերն են, որոնց միջոցով հնարավորություններ են ստեղծվում վերականգնելու Անանիա Շիրակացու տոմարական մատյանի նախական վիճակը, վերնագիրը, կառուցվածքն ու բովանդակությունը՝ հիմնվելով թե՛ հեղինակի, թե՛ հետագա պատմիչների ու տոմարական ժողովածուների նյութերի վրա:

Պարզաբանենք Անանիա Շիրակացու տոմարական-տոնացուցային ժողովածոյի վերնագրի խնդիրը:

Մեզ հայտնի առաջին հեղինակը Զաքարիա կաթողիկոսն է, ով կիրառել է Անանիա Շիրակացու Զատկացուցակը հռոմեացոց և հայոց շարքերով և անվանել այն Շեխակ բոլորակ՝ նշելով նաև Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի 1-ին՝ ապրիլի 4-ի լրման տարվա մասին՝ 314 թվականի կտր-

<sup>1</sup> Անանիա Շիրակացու Մատենագրությունը, էջ 395:

**վածքում:** Նա, օգտագործում է հռոմեացոց և հայոց տոմարների «Պատճէնները», հատկապես, օրագյուտի կանոնը, որպեսզի հիմնավորի՝ 1. Քրիստոսի Ծննդեան ու Յայտնութեան տոնի օրվա՝ Հունվարի 6-ի շաբաթագիրը (հինգչարթի), 2. Աւետեաց Աստոածածնի շաբաթագիրը (չորեքշաբթի)՝ Շեակի կոնկրետ թվականների կտրվածքներով։ 178 թվականի կապակցությամբ Զաքարիան հիշատակել է մեկ վերադրի մասին։

Ի դեպ, հիմնավորել ենք, որ Զաքարիա կաթողիկոսը (855-876 թթ.) է խմբագրել Գրիգոր Արշարունու «Մեկնութիւն ընթեցոածոցը», ամենայն հավանականությամբ, 865/66-876 թթ. սահմաններում, որտեղից էլ համարյա ամբողջությամբ բերենք նրա արժեքափոր վկայությունները՝ հետագա շարադրանքում վերցված հատվածները չկրկնելու համար։

«...բայց զի ի բնագրին ոչ գտանի, մեզ անընդունելի է։ Իսկ մերն այս է, թէ զոր օրինակ լուսաւորացն տարրն զմարդկային բնութեանս ցոյցս ունէր, որպէս Յակոբ պարտէ լուծանելով զեխաղն արեգական, լուսնոյ եւ աստեղաց Յովսեփու, այսպէս եւ զգալի լոյսն պարզ եւ տարած երրեակ թոռվ աւուրն ժողովեալ ի նիւթն, նոյնպէս եւ իմանալի լոյսն ի հորէ՝ ի չորեքշաբթուն աւետարանեցաւ կուսին, ծագեալ մեզ ի նմանէ արեգակն արդարութեան եւ լուսաւոր առեալ զիսաւար մեր։ Որպէս ի չորրորդի՝ կենդանեաց լինել, եւ ստեղծուած Կողջն որով կեանքն յայտնեցան, սա եւ ի չորեքհազարին աւետարանի աւետեօքն Աբրահամու առ Սառա խորհրդաբար եւ ի վեց հազարիս ճշմարապէս աւետարանեցաւ ի Գարբիէլէ սրբոյ կուսին Մարիամու՝ յաւուր չորեքշաբթու, որպէս յայտնի եւ հինգհարիւրեակ բոլորակէն։

Եւ եթէ կամիս գտանել զօրն, կա՛լ երկերիւր եւթանասուն եւ ինն եւ արա՛ եւթներրեակ հոռոմի եւ օրագի՛ւտ արա ապրիլի եւթանն, եւ գտանէս չորեքշաբաթ զօրն աւետեաց։ Նոյնպէս եւ զծննդեանն օր թէ կամիս գտանել, յաւել ի նոյն թոականն թիւ մի, արա՛ եւթներրեակ, նոյնպէս եւ օրագիւտ յունոարի վեցին, որպէս եւ իւր կարգն է, եւ գտանես հինգշաբաթ զօրն ծննդեանն եւ յայտնութեան Փրկչին։ Որպէս եւ ի հինգերորդ աւուրն ջուրցն հանել զեռուն շնչոց կենդանեաց, որ օրինակ է զմկրտութեամբ ծնունդն որդւոյ մարդկան եւ այսպէս ի կարգ անկեալ աւուրքն ունէին չորեքշաբաթն աւետիսն, հինգշաբաթն՝ զծնունդն, ուրբաթն՝ զիսաչելութիւնն, շաբաթ՝ թաղումն, կիւրակէն՝ զյարութիւնն։ Զի որ օրինակ հինգօրեա պահովք յուրբաթն մահու կցորդ լինիմք նոյնպէս հինգօրեա խորհրդոյս զօրութեամբ՝ եւ յարութեանն հաղորդ լինեցուք փոխել յեւթներեակէն ի նոր եւթերեակն։ Եւ չէ պարտ հաւանել ոմանց որ աւելի թոականս լուսնականս եւ արեգակնայինս ցնորին ի քաւութեանն օրէ յառաջ, եւ ի կաւրուտ որ կարեն ածել, որք զաւետիսն ի մարտի քսան եւ հինգն ասեն, եւ ջանան զօրն չորեքշաբաթ առնել, եւ զծնունդն ի դեկտեմբերի քսան եւ հըն-

գին, եւ զօրն ուրբաթ եւ առնել ոչ կարեն, զի թէ հինգհարիւրեակ բոլորակդ ճշմարիտ է, զոր եկեղեցւո Աստուծոյ ընկալեալ է. եւ զչարչարանս Փրկչին երեք հարիւր տասն եւ երիս թուականին եղեալ է, որպէս յերեքհարիւրտասն եւ չորսն՝ ըստ պատուականութեան՝ զապրիլի զչորսն, ապա եւ այս անշարժելիք են. զի մինչ ունիս զայս թուական եւ երեսուն եւ երիս հանես, վասն զի երեսուն եւ չորրորդն ի թուականին պիտի լինել, յունոարի վեցն հինգշաբաթ լինի եւ մինչեւ երեսուն եւ չորսն հանես, ապրիլի եւթն չորեքշաբաթ, եւ եթէ ըստ երրայեցւոցն՝ լուսնականաւքն կամիս գտանել զօր քաւութեանն, որ է պապանձմանն Զաքարիայի եւ դարձն ի տուն իւրեւ զաւետիս Մարիամու Ասուածածնին ի հրեշտակէն, ապա այսպէս. կա՛լ երկերիւր եւթանասուն եւ ութ (զհոռոմին) թուական, եւ այս թուական է որ ըստ Հոռոմին [տաւմարի] զաւետեացն զօրն ի չորեքշաբաթու, եւ զծննդեանն յուրբաթու ածէ ի մարտ, եւ ի դեկտեմբերի ի քսան եւ հինգ: Բայց աստի ի չարչարանացն ամ երեսուն եւ վեց ամ լինի, եւ թէ պատեհ ոք կարծէ, ինքն գիտասցէ, բայց այլ չգտանի որ ընդ հինգհարիւրեակ բոլորակին զուգաւորի, բայց դու կա՛լ զնոյն թուական եւ արա՛ զվերադիր հոռոմի ամսոյ, եւ լինի մի թիւ վերադիրն, եւ արա մարտի ամսոյ ծնունդ, եւ գտանես ի քսան եւ ինն նոյն ամսոյ զծնունդն, եւ էր երրայեցւոցն սկիզբն տարւոյն, որ կոչի նիսան, առաջին ամիսն եւ ապա կա՛լ հարիւրեւթանասուն եւ եօթն օր, եւ այն լինի վեց ամիս լուսնական եւ տասն այլ որ է քաւութեանն օր՝ յեւթներորդ ամսեանն եւ Հոռոմին հոկտեմբերի ամսոյ է մի օր եւ հնգետասսան երրայեցւոցն տաղավարահարացն՝ որ է հոկտեմբեր վեց, եւ ի քսան եւ երկու թշրին ամսոյ՝ կատարումն տօնին եւ դարձն Զաքարիայի ի տուն իւր վասն զի յերեկօրեայ հրամայէր սկսանել տօնին, որ է հոկտեմբերի երեքտասսան, եւ կա՛լ դարձեալ հարիւր եօթանասուն եւ հինգ օր եւ լինի վեց ամիս լուսնական, ըստ հրեշտակին բանի սա Մարիամ զեղիսաբեթէ, եւ տո՛ւր ի նոյն ամսոյ երեքտասսան յառաջիկայ ամսոցն եւ բաւնդակի յապրիլի ամսոյ վեցն աւետիք հրեշտակին առ Մարիամ որոյ օրն լինի չորեքշաբաթ երկերիւր եւթանասուն եւ եւթն թուականաւն, բայց նոցա երկոքին քսան եւ հինգ վրէպ են յաւուրցն զոր կամի, թէ եւ տարեաւ ի վերջ երթան կամ յառաջ, զի զայլն զինչ եւ առնէնն չէ ճշմարիտ, մինչ ընդ հինգհարիւրեակ բոլորակին թուականին չմիաբանին, որով ապրիլի ի հնգետասսանն պիտի գալ երեսուն եւ չորիւր ամօք, որում չարչարանք Փրկչին, զի որպէս զմուտ պահոց ի Զատկէն պարտ է առնել. Այսպէս զաւետիսն եւ զծնունդն՝ չարչարանացն ամէ »<sup>1</sup>:

Վերոհիշյալ հատվածում մի քանի անգամ տարբեր առիթներով Զաքարիա կաթողիկոսը հղում է Շ-եակ բոլորակը, այն է 1. « աւետարանեցաւ

<sup>1</sup> Գրիգոր Արշարունույ քորեպիսկոպոսի Մեկնութիւն ընթերցուածոց, Վենետիկ, 1964, էջ 115-118:

ի Գաբրիէլէ սրբոյ կուսին Մարիամու՝ յաւուր չորեքշաբաթու, որպէս յայտնի եւ հինգհարիւրեակ բոլորակէն», 2. «.... զի թէ հինգհարիւրեակ բոլորակդ ճշմարիտ է, զոր եկեղեցւո Աստուծոյ ընկալեալ է. եւ զչարչարանս Փրկչին երեք հարիւր տասն եւ երիս թուականին եղեալ է, որպէս յերեքհարիւրտասն եւ չորսն՝ ըստ պատուականութեան՝ զապրիլի զչորսն, ապա եւ այս անշարժելիք են. զի մինչ ունիս զայս թուական (313 թ.) եւ երեսուն եւ երիս հանես, վասն զի երեսուն եւ չորրորդն ի թուականին պիտի լինել, յունուարի վեցն հինգշաբաթ լինի եւ մինչեւ երեսուն եւ չորսն հանես, ապրիլի եւթն չորեքշաբաթ....», 3. « Բայց աստի (278 թ.) ի չարչարանացն ամ երեսուն եւ վեց ամ լինի, եւ թէ պատեհ ոք կարծէ, ինքն գիտացէ, բայց այլ չգտանի որ ընդ հինգհարիւրեակ բոլորակին գուգաւորի....», 4. «եւ բաւնդակի յապրիլի ամսոյ վեցն աւետիք հրեշտակին առ Մարիամ որոյ օրն լինի չորեքշաբաթ երկերիւր եւթանասուն եւ եւթն թուականաւն, բայց նոցա երկոքին քսան եւ հինգ վրէպ են յաւուրցն զոր կամի, թէ եւ տարեաւ ի վերջ երթան կամ յառաջ, զի զայլն զինչ եւ առնէնն չէ ճշմարիտ, մինչ ընդ հինգհարիւրեակ բոլորակին թուականին չմիաբանին, որով ապրիլի ի հնգետասանն պիտի գալ երեսուն եւ չորիւր ամօք, որում (313 թ.) չարչարանք Փրկչին, զի որպէս զմուտ պահոց ի Զատկէն պարտ է առնել. այսպէս զաւետիսն եւ զծնունդն՝ ի չարչարանացն ամէ»:

Հետագա շարադրանքում, հատկապես, «Պատճէնների» վերլուծությունները կատարելիս՝ օրագյուտի կանոններով կստանանք շաբաթվա օրերը Շ-եակի տարբեր տարիների համար:

2-րդ վկայության մեջ հեղինակը, հղելով Շ-եակ բոլորակի 313 թվականը, որը հռոմեացոց շարքի մեջ ապրիլի 15-ի լրման տարին է, ինչպես երեսում է նաև 4-րդ մեջբերման ապրիլի 15-ից, դեռ ավելին, հեղինակն ասում է, որ չարչարանաց տարուց պետք է սկսել Աւետեացն Աստուծածնի ու Քրիստոսի Ծննդեան ու Յայտնութեան տոների հաշվարկը: 2-րդ վկայության մեջ հեղինակը միաժամանակ 314 թվականն «ըստ պատուականութեան» ապրիլի 4-ի լրման տարին է նշում, այսինքն՝ իբրև 19-ամյակի 1-ին տարի:

Բավական է վերցնել Անանիա Շիրակացու Լուսնի լրման 19-ամյակի կանոնը, որտեղ ասվում է՝ վերցրո՛ւ թվականը, հանի՛ր ինը և բաժանի՛ր 19-ի, կստանաս լրման օրը կամ համապատասխան համարը, որպեսզի հիմնավորվի, որ Զաքարիա կաթողիկոսն օգտվել է Անանիա Շիրակացու Շ-եակից: Համոզվելու համար կատարենք թվաբանական գործողություն, այն է՝  $314 - 9 = 305 : 19 = 1$  մնացորդ: Իսկապես, Շիրակացու 19-ամյակի առաջին տարում լրումը եղել է ապրիլի 4-ին: Զաքարիա կաթողիկոսի բերած տեղեկության մեջ 314 թվականին ևս լրումը եղել է ապրիլի 4-ին, որը վկայված է իր մոտ, և ստացվում է Անանիա Շիրակացու տոմարական կանոնով:

Հարկ է նշել, որ Անանիա Շիրակացին Քրիստոսի չարչարանաց կամ խաչելության օրը համարել է ապրիլի 4-ը, այն է՝ իր 19-ամյակի 1-ին տարին:

Հաջորդ Հեղինակը, ով գրում է Շիրակացու տոմարական ժողովածոյի մասին, հատկապես, նրա Շեակի Հայոց շարքի, ազգերի տոմարական «Պատճէնների» և, մասսամբ, օգտագործում է Շեակի որոշ կոնկրետ թվականներ, Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսն է:

Բերենք Հովհաննես Դրասխանակերտցու «Պատճմութիւն Հայոց»-ի, որն ավարտել է, հավանաբար, 925 թվականին, որոշ վկայություններ<sup>1</sup>:

1. «Յայսմ տասներորդի Հայրապետութեան սորա (Մովսէսի) և երեսներորդի առաջներորդի ամին Խոսրովայ՝ որդւոյ Կաւատայ արքայի Պարսից՝ լցեալ բովանդակեալ շրջանակ բոլորակի հինգհարիւր երեսուն երիտ ամաց, ապա ի հրամանէ մեծին Մովսէսի քերթողք և գիտուն արոեստին եղին զկարգ թուականութեան Թորգոմեանս համարոյ, որ շարժումը յառաջխաղաց և հիմն զանազան մասանց արոեստին: Եւ այդպէս ըստ հայկականս լեզոի տոեալ տոմար տօնից տարեկանաց, յայնմ հետէ ոչ կարօտանային իբրև մուրացիկ իմն արնելով յայլոց ազգաց զպիտանի խորհրդոց արարչութիւնս»:
  2. «Իսկ Անաստասայ հայրապետին հոգացեալ վասն հայկականս տօմարի, զի թերեւս անշարժ զնա ըստ այլոց ազգաց մարթասցէ յօրինել զի միշտ անշարժք լինիցի տօնք տարեկանաց կամ յեղափող յեղանակք ժամանակաց: Վասն որոյ եւ առ ինքն զԱնանիա Անեցի կոչեալ՝ հմուտ, հրամայէ նմա զստեղծագործել զիսնդրելին իւր: Իսկ նորա ջան ի վերայ եղեալ եւ ըստ բոլոր ազգաց պայմանի՝ անշուշտ յօրինեալ զկարգ հայկական տումարի զի բարեձեւագունից ոմանց եւ զմերս կշռադատեալ՝ մի կարօտասցուք կալ ի զուգաւորութիւն Հոռմայեցւոց: Եւ մինչդեռ խորհէր միտն Անաստաս ժողովօք եպիսկոպոսաց զեղեալսն հաստատել՝ վաղճան կենաց նմա ժամանէր, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց»:
  3. «Եւ այս (Յուսուֆի արշավանքը Հայաստան) լինէր յաւուրս տօնի մեծի պասեքի զատկաց յերեքհարիւրերորդի յիսներորդի ութերորդի շրջագայութեան Թորգոմեանս համարոյ» (= 910 թվականը Հրոտից 24 = ապրիլի 1<sup>o</sup> ըստ Ա. Շիրակացու Շեակի):
- Հովհաննես Դրասխանակերտցու արտահայտությամբ «զկարգ թուականութեան Թորգոմեանս համարոյ»-ը, «զկարգ հայկական տումարի»-ն, որոնց կոնկրետ դրսեորումն է «յաւուրս տօնի մեծի պասեքի զատկաց յե-

<sup>1</sup> Յովիաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Յայոց, Թիֆլիս, 1912, էջ 65, 92, 214:

բեքհարիւրերորդի յիսներորդի ութերորդի շրջագայութեան թորգոմեանս համարոյ» -ն, Անանիա Շիրակացու Շեակ Զատկացուցակն է:

Հովհաննես Դրասխանակերտցին, թեև «զկարդ թոականութեան թորգոմեանս համարոյ»-ը, որը «շարժումը յառաջխաղաց և հիմն զանազան մասանց արոեստին» է, այսինքն՝ հայոց շարժական տոմարի թվականության համակարգը, և դրա առանձին բաղադրամասերի օրինաչափությունները, ինչպես և «ըստ հայկականս լեզոի տոեալ տոմար տօնից տարեկանաց»-ը, այն է՝ Զատկացուցակ տոնացույցն են, վերագրում է Մովսես կաթողիկոսի ժամանակներին, իսկ Անաստաս կաթողիկոսի տարիներին վերագրում է անշարժ տոմարի նախագծի ստեղծումը Անանիա Շիրակացու կողմից, այն է՝ «զկարդ հայկական տոմարի»-ն: Սակայն Շիրակացու բնագրերի միջոցով ցույց տանք, որ նա անշարժ տոմար չստեղծեց:

Շիրակացին «ի Յայտնութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ» ճառում գրում է. «Արդ այսուհետեւ յայտ արասցուք զանցնիւր ազգացն, եթէ յորում ամսեան կամ քանիք աւուրցն լինի սուրբ Յայտնութիւնն:

Առաջին՝ Յայտնութիւն ըստ Երրայեցւոցն Տիբէթ ամսոյ, որ աւր իԱ (21) է միշտ:

Երկրորդ՝ Յայտնութիւն ըստ Ասորւոց Քանուն ամսոյ, որ աւր Զ (6) է միշտ:

Երրորդ՝ Յայտնութիւն ըստ Արաբացւոց Արսոն ամսոյ, որ աւր իԱ (21) է միշտ:

Չորրորդ՝ Յայտնութիւն ըստ Եթովպիացւոց Թերաս ամսոյ, որ աւր ԺԱ (11) է միշտ:

Հինգերորդ՝ Յայտնութիւն ըստ Եղիպտացւոց Տուքիլ ամսոյ, որ աւր ԺԱ (11) է միշտ:

Վեցերորդ՝ Յայտնութիւն ըստ Մակեդոնացւոց Մակատրիոն ամսոյ, որ աւր իԱ (21) է միշտ:

Եւթներորդ՝ Յայտնութիւն ըստ Յունաց (ուղեկ՝ Աւղենեոս, Դիւստրոս՝ ըստ Սարկավագի) ամսոյ, որ աւր Զ (6) է միշտ:

Ութերորդ՝ Յայտնութիւն ըստ Հռովմայեցւոց Յունուարի ամսոյ, որ աւր Զ (6) է միշտ:

Իններորդ՝ Յայտնութիւն ըստ Հայոց՝ փոփոխմամբ է ըստ չորից չորից ամաց, եւ եթէ զիարդ գիտելի է, եւ կամ ընդէր ոչ առկայացեալ ըստ այլոց ազգաց յիւրում տեղւող պատմեցից ըստ կարդի տոմարի»<sup>1</sup>:

Ինչպես նկատելի է, Շիրակացին Յայտնութեան օրը տալիս է ութ ժողովուրդների անշարժ տոմարների ամիս-ամսաթվերով (հունվարի 6 ևն), որոնք

<sup>1</sup> Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 290:

իրար համարժեք են, իսկ հայոց շարժական տոմարի համար գրում է, որ ամսաթիվը 4 տարին մեկ փոխվում է, ինչի մասին կդրի իր տեղում՝ «ըստ կարգի տոմարի», այսինքն՝ հայոց տոմարի «Պատճէնում»։ Պարզ է՝ եթե Անանիա Շիրակացին հայոց անշարժ տոմար կազմած լիներ, հայոց համար թայտնության որոշակի օր կնշեր և չէր ասի, թե 4 տարին մեկ ամսաթիվը փոխվում է։

Բերենք մեկ փաստ ևս։ Շիրակացին իր կազմած Շ-եակի հռոմեացոց շարքում տալիս է Յայտնութեան օրը, որը հայոց եկեղեցական տարվա սկիզբն էր, հուլյան անշարժ տոմարի հունվարի 6, իսկ գարնանային օրահավասարի օրը՝ մարտի 20 ամսաթվերով՝ Շ-եակի բոլոր տարիների համար, իսկ հայոց Շ-եակում, որը համարժեք էր հռոմեականին, Յայտնության օրն սկսվում է Արաց 30-ով և ավարտվում Մարգաց 17-ով՝ 4 տարին մեկ փոխելով հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերը։ Իսկ գարնանային գիշերահավասարի օրն սկսում է Ահեկանի 13-ով և ավարտում Նաւասարդի 25-ով։

Այլ խոսքով՝ անվերապահորեն հերքվում է Հովհաննես Դրասխանակերտությունները Անանիա Շիրակացու տեղեկությունն այն մասին, թե Անանիա Շիրակացին կազմել է հայոց անշարժ տոմարի նախագիծ։

Հետեւում է, որ Դրասխանակերտցու տեղեկությունները Անանիա Շիրակացու տոմարի, ինչպես և հայոց թվականի մասին, վերաբերում են հայոց շարժական տոմարին։ Պարզ է, որ նրան հետևած հեղինակների տեղեկությունները նույնպես պետք է հասկանալ այդ իմաստով ու վերագրել Շիրակացուն։

Հ. Դրասխանակերտցու տեղեկությունները վերաբերում են Ա. Շիրակացու տոմարական-տոնացուցային ժողովածոյին ընդհանրապես, իսկ, հատկապես, Շ-եակի հայոց շարքին ու նրա համար գրված կանոններին, այսինքն՝ հայոց «Պատճէնին»։

Հովհաննես Դրասխանակերտցին գիտե նաև ազգերի տոմարների «Պատճէնների» մասին, որը երեսում է նրա «ըստ այլոց ազգաց» և «ըստ բոլոր ազգաց պայմանի» արտահայտություններից։ Ինն ազգերի տոմարների պատճենների մասին կխոսենք հետագա շարադրանքում։ Անկասկած է, որ Հովհաննես Դրասխանակերտցին օգտագործել է Շիրակացու «ՇԼԲ կարգը» և ունեցել մատենագրական այլ վկայություններ, որոնք առաջմ հայտնի չեն այլ սկզբնաղբյուրներից։

Հովհաննես Դրասխանակերտցին միաժամանակ գրել է, որ Ա. Շիրակացու հորինած «գկարգ հայկական տոմարի»-ն Անաստաս կաթողիկոսը մտածել է հաստատելու եպիսկոպոսների ժողովով, բայց չի հասցըել, քանզի վախճանվել է։ Այս միտքն առնվազն անհասկանալի է, որովհետև, ինչպես Զաքարիա կաթողիկոսն է գրում, Շ-եակը պաշտոնապես օգտագործվել է

մեր եկեղեցու կողմից: Բացի այդ՝ Անաստաս կաթողիկոսի իրավունքների շրջանակներում էր տոնացուցային- տոմարական մատյանը, հատկապես, Շեակ Զատկացուցակը պաշտոնապես ներդնելը եկեղեցական կենցաղ, դեռ ավելին՝ վարդապետներին սովորելու և ուսումնական հաստատություններում մանկանց սովորեցնելու համար: Պատահական չէ, որ Դավիթ քահանան իր գրչագիրը ժառանգություն է թողնում Ղուկասին՝ իր որդուն, տոմարի մեջ հմտանալու ակնկալիքով: Մանավանդ, «զշարադրութիւն տոմարաց»-ը Ա. Շիրակացու համառոտված ժողովածուն է:

Վերոհիշյալից պարզ է դառնում, որ Հ. Դրասխանակերտցու վկայությունները, այն է՝ «զկարգ թուականութեան Թորգոմեանս համարոյ»-ը, «Տոմար տօնից տարեկակաց»-ը, «զկարգ հայկական տումարի»-ն համարժեք են դառնում Ա. Շիրակացու և Զաքարիա կաթողիկոսի տված «ՇԼԲ կարգին» և «Շեակ բոլորակին» (կարգը Շեակին)՝ մասնավորեցնելով և ընդգծելով Զատկացուցակի հայոց շարքը, թեև հռոմեացոց շարքը զուգահեռ դրված է հայոցի հետ, դեռ ավելին՝ 550 տարվա կտրվածքով հռոմեացոց բոլորակին էր համադրված հայոցը:

Այլ խոսքով՝ Հ. Դրասխանակերտցին տարբեր բառակապակցություններով, սակայն միևնույն բովանդակությամբ Անանիա Շիրակացու տոմարական-տոնացուցային ժողովածոյի մասին գրում է՝ առանձնացնելով ու մասնավորեցնելով հայկական Շեակը:

Զաքարիայի «զի թէ հինգհարիւրեակ բոլորակդ ճշմարիտ է զոր եկեղեցւոյ Աստուծոյ ընկալեալ է» արտահայտությունը նոր էջ է բացում Ա. Շիրակացու Շեակի՝ հայոց մեջ պաշտոնական օգտագործման համար և ինչպես թեական են դառնում Դրասխանակերտցու՝ Անաստասի վախճանի պատճառով եպիսկոպոսական ժողով չհրավիրելու և չհաստատելու «զկարգ հայկական տումարի»-ն, այնպես էլ Գրիգոր Մագիստրոսի դիտարկումը՝ կաթողիկոսարանում «Մեծ Քննիկոնը» կաթողիկոսարանում փակի տակ պահելու վարկածները:

Այլ խոսքով՝ Զաքարիա կաթողիկոսի հնագույնն է Շիրակացու Զատկացուցակի՝ հայ եկեղեցու կողմից պաշտոնական օգտագործման մասին, որտեղ Զատկացուցակն անվանված է «Շեակ բոլորակ»: Ի դեպ, «բոլորակ» բառը գրաբարում համարժեք է բոլոր և շրջան տերմիններին ևս: Վերոհիշյալ արտահայտությանը զուգահեռ Ա. Շիրակացու հռոմեացոց և հայոց շարքերով կազմած Զատկացուցակների հիշատակարանում գտնում ենք «ՇԼԲ կարգ» ձեակերպումը, որին կարճ անվանել են Շեակ:

«Ժամանակական կանոնի» սկզբում, ինչպես կտեսնենք ժողովածոյի կառուցվածքը քննելիս, «ՇԼԲ կարգը» կամ «Շեակ բոլորակը», կամ կարճ՝ Շեակը այն հիմքերի հիմքն էր, որից արտածվելու էին, ինչպես կտեսնենք

«Ժամանակական կանոնի» արարչության թվականները և տոնացուցային տարվա տոնների մեկնությունները: Ա. Շիրակացին 3 անգամ օգտագործել է շրջագայություն՝ ՇԼԲ-ն իբրև 19 և 28 ամյակների արտադրյալի թիվ, Արարչության թվականության համակարգի 1-ին տարի և շաբաթվա օրերի հատվածի մեկնակետ:

Հետևությունը պարզից էլ պարզ է. Զատկացուցակի հիշատակարանի և «Ժամանակական կանոնի» մեջ օգտագործված վերնագիրը տարածվել է տոմարական-տոնացույցային ժողովածոյի վրա, և «ՇԼԲ կարգ» (հռոմեացոց և Հայոց)»ը դարձել է «ՇԼԲ կարգ», «ՇԼԲ ամս», «ՇԼԲ ամաց»՝ արարչության թվականություննը կամ փաստված Զատիկները հաշվարկելու համար, իսկ Զաքարիա կաթողիկոսի մոտ ստացել «Շ-եակ բոլորակ» անվանումը<sup>1</sup>:

Հաջորդ հեղինակը, ով օգտագործել է Անանիայի Շ-եակը, Ստեփանոս Տարոնացին (Ասողիկ) է: Նա «զթուականն Հայոց»-ի տակ հասկացել է և լայնորեն օգտագործել իր «Տիեզերական պատմության» մեջ: Այստեղ առաջին անգամ հանդիպում ենք Անանիա Շիրակացու գրած տոմարական մատյանի անվանը՝ «Քննիկոն» տերմինով. «Իսկ Անաստաս խորհեալ Հայստանեացս կարգել տոմար անշարժ ըստ այլոց ազգաց՝ և հրամայէ Անանիայի Շիրակացւոյ (ձեռ. Շիրակեցւոյ) կարգել զՔրոնիկոնն (ձեռ. զՔննիկոնն) և վախճանի՝ կալցեալ աթոռն ամս Զ»<sup>2</sup>:

Ստ. Մալխասայանցը Ասողիկի բնագրի «Քննիկոն» տերմինը երկու տեղում էլ փոխել է՝ դարձնելով «Քրոնիկոն» ու դրա տակ հասկացել է Անանիա Շիրակացու երկը, այն է՝ ժամանակագրությունը՝ նմանեցնելով Եվսեբիոս Կեսարակացու «Քրոնիկոնի» հետ:

Հարկ է նշել, որ Ասողիկը վերոհիշյալ հատվածում «կարգել տոմարը» համարժեք է նկատել «կարգել քննիկոնը»: Նա տոմար և քննիկոն տերմիններով է բնորոշել Անաստաս կաթողիկոսի պատվերով՝ Անանիա Շիրակացու գրած տոմարական մատյանն ու նրա անվանումը: Այլ խոսքով՝ Անաստաս կաթողիկոսը հրամայել է Անանիա Շիրակացուն ստեղծելու «Քննիկոն» անունով տոմարի մատյան, որտեղ սահմանել էր նաև Հայոց անշարժ տոմարը՝ այլ ազգերի տոմարների նման:

Ի դեպ, Հայոց անշարժ տոմարի նախագծի վարկածն Ասողիկը քաղել է Հովհաննես Դրասխանակերտցուց, որը հերքվեց, ուստի վերջինիս «կարգ հայկական տոմարի» ձևակերպումը համահունչ է դառնում Ասողիկի «կարգել տոմար»-ը և «կարգել Քննիկոն» -ը, որոնք համարժեք են դառ-

<sup>1</sup> Զաքարիա կաթողիկոսը Շ-եակի կոնկրետ թվականների, օգտագործելով օրագյուտի կանոնները, ներկայացնում է Թրիստոսի ծննդեան ու Յայտնութեան՝ հունվարի 6, Առւմն Աստոածածնի՝ ապրիլի 6/7, ինչպես և Թրիստոսի Ծնունդը դեկտեմբերի 25 և Աւետուն Աստոածածնի՝ մարտի 25, շաբթագրերը:

<sup>2</sup> Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողիկան Պատմութիւն տիեզերական, ի Ս. Պետերբուրգ, 1885, էջ 99:

նում Անանիա Շիրակացու «Զատկի» ճառի հիշատակարանի «ՇԼԲ կարգ»-ին և «ՇԼԲ ամ»-ին, Զաքարիա կաթողիկոսի հիշատակած «Շ-եակ բոլորակ»-ին, Հովհաննես Դրասխանակերտցու «կարգ թուականութեան Թորդգոմեան համարոյ»-ին՝ վերջինիս հետ մասնավորեցնելով Շ-եակի հայոց շարքը, որն Ասողիկը բազմիցս օգտագործել է իր աշխատության մեջ, արտահայտելով նոր տերմինով, այն է՝ «քննիկոն», այսինքն՝ Շ-եակ, որը ինչպես կտեսնենք, հիմնավորվում է հետագա տեղեկություններով ևս:

Հետեապես, Անանիա Շիրակացին սահմանեց «Շ-եակ հրաշագան», իսկ «կարգել գտոմարն» պետք է հասկանալ՝ սահմանեց տոմարական մատյան (գիրք), որի հիմքը Շ-եակն էր: Ի դեպ, «Նոր բառագիրք հայկագեան լեզոփ» հեղինակները «ՏՈՄԱՐ» կամ «ՏՈՒՄԱՐ»-ը բացատրել են նաև որպես «հատոր գրոց», «գիրք», «մատեան», ինչպես և «ցուցակ հաշոփ» և «կարգք ժամանակագրութեան, աստեղաբաշխութեան, թուականաց ազգաց, և տօնից սրբոց, կաղանդացոյց, օրացոյց և թուական» իմաստներով, որը, ինչպես կտեսնենք, ընդգրկում է Անանիա Շիրակացու տոմարական-տոնացույցային ժողովածոյի վերնագիրն ու բովանդակությունն ամբողջությամբ:

«Մեկնութիւն տումարի զոր արարեալ Յոհաննիսի վարդապետի որ մականուննեին Կողեռն» վերնագրով ձեռագրում բառացի օգտագործված ենք գտնում Անանիա Շիրակացու բնագրերը, որոնք կներկայացնենք Անանիա Շիրակացու ժողովածոյի կառուցվածքն ու բովանդակությունը քննելիս: Այստեղ միայն նշենք, որ Հ. Կողեռնը բերում է Շ-եակում Քրիստոսի Ծննդեան ու Յայտնութեան ամիս-ամսաթիվը՝ Արաց 30, ինչպես և Շիրակացու «Ժամանակական կանոնի» «Կայսերք» հատվածի՝ Հուստինիանոսի 25-րդ տարվա հիշատակությունը, հայոց Շ-եակի 1-ին և 2-րդ տարվա վերադիրները, Աղամից մինչև հայ թվականը գտնելու համար Շ-եակի՝ Արարչության թվականի հաստատունին (5976) հայ թվականը գումարելը, Քրիստոսի Ծննդից մինչև հայ թվականի հաստատունը (552)՝ Դիոնիսյան քրիստոնեական թվականով և այլն:

Բերենք այդ արժեքավոր վկայությունը, որտեղ Հովհաննես վարդապետը գրում է. «Արդ վասն զի յԱրաց ամսոյ Լ (30) հանդիպեցաւ զնել զգիր թուականութեան հայոց ազգիս ի ձեռն Անանիայի Շիրակացւոյ ի Ժ. Երորդ (10-րդ) ամի աթոռակալութեան Տեառն Յոհաննիսի հայոց կաթողիկոսի, որ ի Գ (23) թիւ էր հայրապետացն ի սրբոյն Գրիգորէ եւ ի Ե (25) ամին Յուստինիանոսի կայսէր, ի հիմնարկութեան Մեծ եկեղեցւոյն սուրբ Սոփեայ եւ ի ԻԲ (22) ամին Խոսրովու պարսից արքայի: Արդ յայնմ տարւոյ որում զթուականն եղին ՌՃՀՃ (5976) ամ էր յԱղամայ մինչեւ ի հայ թվականն եւ ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ի սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէ

ամք ՄՀԶ (276) եւ անդր մինչեւ զհայ թոականն ամք, որ լինի ի ծննդենէն Քրիստոսի մինչև զհայ թոականն ամք ՇԾԲ (552)»<sup>1</sup>:

Ի դեպ, Հովհաննես Կողեռնը տոմարի մեկնությունը գրել է 1007 թ. և իրականացրել «Պատճէն տոմարի հայոց»-ի խմբագրությունը, որոնց մասին գրել ենք այլ առիթով<sup>2</sup>:

Հովհաննես Կողեռնը հայոց Մեծ թվականի սկզբնավորումն առնչում է Անանիա Շիրակացու հետ և հայոց Շ-եակը համարժեք է նկատում «գիր թոականութեան հայոց»-ին, այսինքն՝ Անանիա Շիրակացու ժողովածուն ու դրա վերնագիրը բնորոշել է իբրև հայոց Շ-եակ:

Գրիգոր Մագիստրոսը Պետրոս Գետաղարձին (1020-1053 թթ.)<sup>3</sup> հասցեագրված թղթում, ի թիվս այլ հարցերի, խնդրում է նաև Ա. Շիրակացու «գրոց» ընդօրինակությունը; Այդ նամակը խորագրված է «Առ տէր Պետրոս ի ժամանակի խուժան յառնելոյ ի քաղաքին ի վերայ նորա. Բան միսիթարական և հարցումն Անանիայի գրոց Շիրակայնոյն, որը մեծ քննիկոնն անոանեն»<sup>4</sup>:

Վերը բերված խորագրից երեսում է, որ Գրիգոր Մագիստրոսի ժամանակակիցները, ինչպես տեսանք նաև, Ասողիկը, Ա. Շիրակացու «գրոցի» «մեծ քննիկոն» տերմինն օգտագործելով, հասկացել են նրա Շ-եակ տոմարագիրքը կամ հայոց Մեծ թվականության տոմարական մատյանը, որի հիմքը Շ-եակն էր:

Հովհաննես Սարկավագը, ինչպես ցույց ենք տվել, 1094 թվականին գրեց տոմարի մեկնություն, որտեղ լայնորեն օգտագործել է Ա. Շիրակացու տոմարական մատյանի բնագրերը, այդ թվում՝ Հոռմեական Շ-եակի շարքը<sup>5</sup>:

Նա մեկնության սկզբում ունի ենթավերնագիր՝ «Յաղագս Շ-եակի», որտեղ ասվում է, որ 1-ին Շ-եակի սկզբից, նկատի ունի 19-ամյակի ապրիլի 4-ի լրման տարին՝ սարկավագադիր 10 թվականը = 562 թ., անցել է ՇԼԲ (532) տարի, երբ գրում է իր «գիր մատենիդ»-ը: Սրանով մի կողմից ակնարկում է Անանիա Շիրակացու Շ-եակը, մյուս կողմից հնարավորություն է տալիս թվագրելու իր տոմարի մեկնության գրության ժամանակը, այն է՝ 1094 թ. (10 թ. = 562 + 532 = 1094 թ.):

Ստեփանոս Մեծրկա որդու 1126 թ. ընդօրինակած և խմբագրած տոմարագրի կամ տոմարական ժողովածոյի հատվածներից մեկը վերնագր-

<sup>1</sup> ԶԵՆ. թիվ 1999, էջ 67 թ – 87 թ:

<sup>2</sup> Ո. Յ. Վարդանյան, «Պատճեն Տոմարի Հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը. 6-18-րդ դարեր, Եր., 2007:

<sup>3</sup> Ո. Յ. Վարդանյան, Հայոց տոմացույցը (4-18-րդ դարեր), Եր., 1999, էջ 563:

<sup>4</sup> Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 4:

<sup>5</sup> Ո. Յ. Վարդանյան, Գ. Յ. Կարախանյան, Անանիա Շիրակացին և նրա քննիկոնը, Աճեմյան մատենաշար, հ. Ա, Եր., 2002, էջ 75:

ված է «ի Քննիկոնէ»<sup>1</sup>: Այդ բնագրի մեջ հիմնավորվում են Շ-եակը և դրա բաղադրամասերը (Լուսնի լրման 19-ամյա և Արեգակի 28-ամյա պարբերաշրջանները, որոնց արտադրյալն է Շ-եակը (19 X 28)), ինչպես նաև վերադիրը, հայոց վերադրից նահանջ տարիներին մեկ միավոր պակասեցնելը և այլ տոմարական իրողությունները: «ի Քննիկոնէ» բնագրում բացակայում է ժամանակագրությունը, ուստի «ի Քննիկոնէ»-ն նախնական կամ ժողովածոյի վերնագիրն է, որից նա նյութեր է քաղել իբրև ընդօրինակողիմբագիր: Այդ վերնագրի համարժեքը «ի Շ-եակէն» է կամ «ի Շ-եակ թուկանէն»: Վերջինս հիմնավորվում է նույն տոմարագրքի «Վասն գիտելոյ զամս ի սկզբանէ աշխարհի մինչեւ ի քեզ» վերնագիրը կրող բնագրով, որտեղ կարդում ենք. «Եթէ կամիցիս գիտել, թէ քանի ամէ յԱղամայ մինչեւ ուր ես. Կա՛ ՑԿ (6060) եւ զհայ թուկան ի վերա ած, եւ այն է ըստ Յունաց համարողութեան, ըստ նոր թուկանիս շրջանաց քննիկոնին ստուգիվ»<sup>2</sup>:

Բնագրում տրված է 6060 հաստատունով և հայոց Մեծ թվականով Արարչության Կոստանդնուպոլսի կամ Հունաց թվականն ստանալու կանոնը, որը հիմնված է Շ-եակի՝ հայոց Մեծ թվականի պարբերաշրջանների վրա: Այսպես, 1 (հայոց թվականի առաջին տարին = 553 թ.) + 6060 (հաստատուն), որից էլ վերցրել է հիշյալ բնագրի հեղինակը:

Համաձայն քննարկվող կանոնի՝ վերցվել է 6060-ը, գումարվել հայոց Մեծ թվականը և ստացվել արարչության կ. Պոլսի կամ Հունաց թվականը՝ հայոց Մեծ թվականի հաշվով: Այս կանոնը անկասկած ստեղծել է Շիրակացին, որից էլ վերցրել է հիշյալ բնագրի հեղինակը:

Հարկ է նշել, որ ուշ շրջանում 6060-ի փոխարեն գրել են նաև 6059 հաստատուն թիվը, որպեսզի ճիշտ ստանան արարչության կ. Պոլսի կամ Հունաց թվականը հայոց Մեծ թվականի հաշվով, որովհետեւ 1460-ամյա պարբերաշրջանի ավարտի հետևանքով հայոց Մեծ թվականին ավելացել էր մեկ տարի, որը խանգարում էր գտնելու ճիշտ թվականը: Այսպես, եթե հայոց Մեծ թվականին՝ 1-ին գումարենք 6060, կստանանք 6061, որը համարժեք է 553 թվականին, իսկ հայոց 534 թվականին (= ներկա 1085 թ.) պետք է գումարել 6059, որպեսզի ստանանք արարչության կ. Պոլսի թվականը, այն է 6593-ը՝ համարժեք ներկա 1085-ին:

Քննիկոն անունն են տվել ոչ միայն հայոց թվականին, այլև հետագայում հոռմեական Մեծ թվականի (սկ. 249 թ.-ավ. 780 թ.) շարունակությունը կազմող հոռմեական Փոքր թվականին (սկ. ներկա 781 թվականից

<sup>1</sup> ԱՄ թիվ 1999 ձեռ., էջ 152 ա:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 23 թ.-24 ա:

մինչև 1312թ.), որը Զատկացուցակի երկրորդ 532-ամյա շրջանն էր հռոմեական թվականների հաշվով:

Հետևապես, Շեակ պարբերաշրջան, Քննիկոն և Հայոց Մեծ թվական (առաջացել էր Շեակից) Համարժեքներ են, ուստի Հայոց Մեծ թվականի (կամ տոմարի) ժողովածուն հետագայում ընկալվել է իբրև Քննիկոն = Շեակին: Ատեփանոս Մեծրկա որդին միաժամանակ Քննիկոն տերմինն է օգտագործել՝ հետևելով Հովհաննես Սարկավագին:

3082 թվահամարի ձեռագրի (ընդօրինակված 1267թ.) հռոմեացոց «Պատճէնում» գրված է. 1. «Թուական հռոմայեցւոց այլէ՛ս արա. կա՛լ յեւթն ամէն Փիլիպոսի կայսեր մինչեւ ԼՂ ամն յուստինիանոս կասեր, որ լինի ամք ՅԴ, զհայ թուականն ի վերա՛յ բեր, աւագ թուական է հռոռոմոց: ՇԼԲ ի բա՛ց առ, որ մնայ փոքր թուական է, որ կոչի Խրաւնիկաւն»<sup>1</sup>:

2. «Այլ կա՛լ Խրաւնիկաւն, այսինքն՝ զթուականն և ե՛րթ ժթ, ժթ, մնայ ժթ, որ փոքր վերադիր է հռոռոմի, Բ ի վերա՛յ բեր, մեծ վերադիր է»:

3. «Եւթներեայ այսպէ՛ս արա. կա՛լ զթրաւնիկաւն թիւ մի պակաս....»:

Գրիչն այս հատվածները վերցրել է Ստ. Մեծրկա որդու ժողովածոյից և Քննիկոն տերմինը փոխարինել «խրաւնիկաւն»-ով՝ վերահմաստավորելով ու հասկանալով իբրև Շեակի 2-րդ շրջապատույտ, այն է՝ հռոմեական Փոքր թվական:

Սամոել Անեցու տոմարական ժողովածոյի մեջ, որը գրվել է 1165 թվականին, պահպանվել է Անանիա Շիրակացու հռոմեացոց Մեծ թվականի և դրա վրա 304 հաստատունով Հովհաննես Սարկավագի խմբագրած «Պատճէն տումարի հռոմայեցոց» -ի ընդօրինակությունը, որտեղ կարդում ենք. «Թուական հռոռոմոց այսպէ՛ս արա. կա՛լ զհայ թուականն, ՅԴ (304) ի վերա՛յ բեր, մեծ թուականն է հռոմայեցոց, ՇԼԲ (532) ի բա՛ց երթ, փոքր թուական է հռոռոմի, որ կոչի Քննիկոն»<sup>2</sup>:

Սամոել Անեցին հռոմեացոց Մեծ թվականից Փոքրն ստանալու կանոնում (532-ամյակի 2-րդ շրջապատույտի համար) թվականն անվանել է Փոքր թվական հռոռոմի և հետևելով Հ. Սարկավագին՝ նաև «Քննիկոն»:

«Սկիզբ հռոռոմայերէն տոմարի» պատճենում, որը Հովհաննես Սարկավագի խմբագրածն է (հին կանոնը և ավելացրած նորը), գրված է. «Թուական հռոռոմի այսպէ՛ս արա. կալ յէ (7) ամեն Փիլիպոսի կայսեր մինչեւ ցԼՂ (34) ամն Հուստինիանոսի կայսեր, որ են ամք ՅԴ (304), զհայ թուականն ի վերա՛յ բեր (լուսանցքում՝ աւագ թուական է), որ է բուն թուական հռոռոմի: Կա՛լ

<sup>1</sup> Տես 3082 թվահամարի գրչագիր, էջ 384 ա-բ:

<sup>2</sup> ՍՍ, թիվ 1999 ձեռ., էջ 205 ա-բ:

զբուն թուականն, Շլ.Բ (532) ի բա՛ց երթ եւ որ ի խոնարհ մնայ, այն կոչի Քննիկոն, որ է նոր թվական]:

Դարձեալ կա՛լ զհայ թուականն՝ զնորն, ՅԴ (304) ի վերա՛յ բեր, փոքր թուական է Հոռոմի, որ կոչի Քննիկոն»<sup>1</sup>:

Վերոհիշյալ հատվածները բերված են հայոց Մեծ թվականով հոռմեացոց Բուն, Ավագ կամ Մեծ թվականը, Հոռմեացոց Մեծ թվականով հոռմեացոց Փոքր թվականը, Հայոց Փոքր թվականով հոռմեացոց Փոքր թվականն ստանալու կանոնները, որոնք, ինչպես նկատելի է, հիմնված էին Շեակի 1-ին և 2-րդ պարբերաշրջանների վրա: Ակնհայտ է, որ կանոնների խմբագրողն ու ստեղծողը Հովհաննես Սարկավագն է: Հայոց Մեծ թվականով հոռմական Բուն թվականի կանոնի հեղինակը Ա. Շիրակացին է՝ չհաշված «յէ(7) ամեն Փիլիպպոսի կայսեր մինչեւ յլ. Դ (34) ամն Հուստինիանոսի կայսեր» հատվածը, որը, միանշանակ, Ստ. Մեծրկա որդու՝ հետագայում կատարած ընդմիջարկությունն է, որովհետեւ Անանիս Շիրակացին և Հովհաննես Սարկավագը շատ լավ գիտեին, որ Հայոց 1 թվականը (1 = 553 թ.) Զատկի հաշվով Հուստինիանոսի 25-րդ տարուն է համարժեք, իսկ 34-րդ տարին (= 10 = 562 թ) էասյանների և իր Շ-եակի 19-ամյակի 1-ին տարվա՝ ապրիլի 4-ի լրման տարվա համարժեքն է, իսկ Ստ. Մեծրկա որդին հաշվարկել է Փիլիպպոսի 7, 5, 2 (?) տարուց մինչև Հուստինիանոսի 34-րդ տարին (562 թ.): Հովհաննես Սարկավագի ստեղծածը մյուս կանոններն են: Նա Քննիկոն անուն է տվել Հոռմեական Մեծ թվականի (սկ. 249 թ., ավ. 780 թ.) շարունակությունը կազմող Հոռմեական Փոքր թվականին (սկ. 781 թ. մինչև 1312 թ.), որ Զատկացուցակի երկրորդ 532-ամյա շրջապտույտի տարիներն էին՝ հոռմեական Փոքր թվականի հաշվարկով: Այլ խոսքով՝ նա թվական=Քննիկոն համարժեքը կոնկրետացրել է Հոռմեական Փոքր թվականի վրա, որը 532-ամյակի 2-րդ շրջապտույտի թվականն էր, և այն անվանել է Քննիկոն:

Քանի որ Հովհաննես Սարկավագն է հոռմեական Փոքր թվական անվանել Քննիկոն 1094 թվականից, ուստի Քննիկոն տերմինի սկզբնավորումն այդ իմաստով պետք է կապել 11-րդ դարի վերջերի հետ, թեև հոռմեացոց Փոքր թվականն սկսեց 781 թվականից, իսկ Ասողիկի և Գր. Մագիստրոսի ժամանակակիցները Քննիկոն կամ Մեծ Քննիկոնն ընկալել են իբրև Շ-ակ:

Հակոբ Ղրիմեցու մեկնության (գրված՝ 1416 թ.) մաս կազմող «Պատճէնում» (գրված 14-րդ դարի վերջերին) «Յաղագս Հոռմայեցւոց » վերնագրով հարց ու պատասխանի մեջ կարդում ենք. « (Հարցումն.) Զի՞նչ է՝ կալ մինչև Յլ ամն Յուստինիանոսի և յը ի՞ն իսուրովու:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 35 ա-բ:

(Պատասխանի). Զի յէ ամէն Փիլիփոսի կայսեր մինչև յլ Հուստինիանոսի և ի ցի՞Դ Խոսրովու եղեն ամք ՅԴ և կատարումն Մեկին Անդրիասայ Ը ազգաց և անդ (վերևում՝ տ) ի աստ էր մեր թուականս: Վասն այն հանապազորդն ՅԴ կալնուք և մեր թվականնի վր [վերայ] բերենք, մեծ թվական է հոռոմոց (Հոռմեացւոց) և զշրջանն ի բաց գնալով, փոքր թվականն է, որ կոչի քննիկոն»<sup>1</sup>:

Հ. Ղրիմեցին Փիլիպոս կայսեր 7-րդ տարուց մինչև Հուստինիանոսի 30-րդ և Խոսրովի 24-րդ տարիները, այն է՝ Հոռմեական Մեծ թվականի 1-ին տարուց մինչև Անդրեասի 200-ամյակի վերջին տարին հաշվել է 304 տարի, որը հայոց Մեծ թվականի հաստատունն է՝ հանապազորդը, որը հետագայում դառնալու էր նաև Հայոց Փոքր և Հոռմեացւոց Փոքր թվականների հաստատունը, որովհետև ինչպես Հայոց Մեծ և Փոքր, այնպես էլ Հոռմեացւոց Մեծ և Փոքր թվականներն սկսում են Շեակի՝ հաշվման իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարուց, ուստի Հոռմեացւոց Մեծ թվականի հաստատունը գումարելով Հայոց Մեծ թվականին, կստանանք Հայոց Մեծ թվականի համարժեքը Հոռմեական թվականով ( $1 + 304 = 305 = 553$  թ.), իսկ Հոռմեական Մեծ թվականի 1-ին տարուց գնանք 532 տարի կստանանք Հոռմեական Փոքր թվականի 1-ին տարին ( $1 = 781$  թ.), իսկ Հայոց Փոքր թվականից հանելով 304-ը կամ Հոռմեական Փոքր թվականին գումարելով այն, կստանանք դրանց համարժեքները ( $333 - 29 = 304$ ):

Հ. Ղրիմեցին Հոռոմոց Փոքր թվականը նախորդների նման անվանում է քննիկոն, իբրև 532-ամյակի 2-րդ շրջապտույտի թվական, որի համար ասում է, թե Հոռոմոց Մեծ թվականից հանի՛ր 532, կստանաս Հոռոմոց Փոքր թվականը:

2001 թվահամարի գրչագրի (15-րդ դար) «Տոմար Հոռոմի» պատճենում գրված է. «Թուական Հոռոմի այսպէ՛ս արա. կա՛լ յէ ամէն Փիլիպոսի կայսեր մինչև յլ Դ (ամն Հուստինիանոսի կայսեր և ի ի՛Դ (24) Խոսրովու պարսից արքայի, որ լինի ամք ՅԴ (303) (լուսանցքում՝ Դ), այսինքն՝ ՅԴ (304) ) և զհայ թուականն ի վերա՛յ բեր, մեծ թուական է (Հոռոմի): Կա՛լ զմեծ թուականն Հոռոմի և զշրջանն ՇԼԲ (532), որ մնա, փոքր թուական է, որ կոչի քննիկոն»<sup>2</sup>:

Այս ընդօրինակված է Ստ. Մեծրկա որդու խմբագրած ընդօրինակությունից, և այստեղ նույնպես առկա է շրջան (ՇԼԲ), քննիկոն, փոքր թվական Հոռոմի համարժեքությունը:

18-րդ դարում տպագրված Պարզատումարներում, որոնք վերցված են վաղ շրջանում առկա ձեռագիր ընդօրինակություններից «Տոմար Հոռմեաց-

<sup>1</sup> ՍՍ, թիվ 1114 ձեռ., էջ 17 ա:

<sup>2</sup> ՍՍ, թիվ 2001 ձեռ., էջ 21 թ – 22 ա:

ւոց» ենթավերնագրի տակ գրված է. «Թոռական այսպէս արա. կա՛լ զհայոց մեծ թոռականն, ՅԴ ի վերա՛յ բեր, մեծ թոռական է հոօմոց: Եւ գըրջանն ՇԼԲ, ՇԼԲ ի բա՛ց երթ, որ մնայ՝ փոքր թոռական է հոօմոց, որ քննիկոն կոչի»<sup>1</sup>:

Հոռմեացոց թվականի այս կանոնում վկայված է հայոց Մեծ թվականի հաստատունի՝ 304-ի հոռմեական Մեծ թվականից Փոքր թվականն ստանալու կանոնը, որի արդյունքում դարձյալ առկա է շրջան (ՇԼԲ), քննիկոն, փոքր թվական հոռոմի համարժեքությունը:

Այսպիսով հետազոտությունը ցույց է տալիս, որ Անանիա Շիրակացու տոմարական-տոնացուցային մատյանը, հիմքում ունենալով իր «Ժամանակական կանոնի» «Այսպէս ի սկզբանէ արարածոց» սկսվածքով հատվածի ՇԼԲ շրջապտույտի և դրա օրինաչափությունների հիմնավորումները, արարչության թվականության համակարգերը հաշվարկելու, ինչպես և Զատկացուցակի հեղինակի կողմից գրված հիշատակարանի «ՇԼԲ կարգ» արտահայտությունը Զատկացուցակ կազմելու մասին, հետագայում ապրած հեղինակներն ընկալել են իբրև նրա ժողովածոյի վերնագիր՝ ընդգծելով նաև ժողովածոյի այս կամ այն կողմը:

Զաքարիա կաթողիկոսը վերնագիրն ընկալել է իբրև «Շ-եակ բոլորակ»՝ օգտագործելով Զատկացուցակի հոռմեական շարքը:

Հովհաննես Դրասիսանակերտցին «կարգ թոռականութեան թորգոմեան համարոյ»-ին զուգահեռ է տարեկ Զատկացուցակի Շ-եակի հայոց շարքի հետ:

Ասողիկը Ա. Շիրակացու տոմարական մատյանի վերնագիրն արտահայտել է նոր տերմինով, այն է՝ Քննիկոն, որը համահունչ է Շ-եակին, առանձնապես, Զատկացուցակի հայոց շարքին, և նրա պատմության մեջ լայնորեն օգտագործված ենք գտնում հայոց թվականության համակարգը:

Հովհաննես Կողեւնը հայոց Մեծ թվականի սկզբնավորումը կապել է Ա. Շիրակացու հետ և նրա հայոց Շ-եակ շարքին համարժեք է նկատել «գիր թոռականութեան հայոց»-ը, ինչպես և Շիրակացու ժողովածուն ու Շ-եակը բնորոշել՝ իբրև հայոց Շ-եակ:

Գր. Մագիստրոսի ժամանակակիցները, որոնց թվում, ինչպես տեսանք Ասողիկը, Ա. Շիրակացու «գրոց»-ի «Մեծ քննիկոն» տերմինի տակ հասկացել են Շ-եակ տոմարագիրքը կամ հայոց մեծ թվականության տոմարական մատյանը, որի հիմքը Շ-եակն էր:

Հովհաննես Սարկավագը մեկնության սկզբում ունի «Յաղագս Շ-եակի» ենթավերնագիրը, լայնորեն օգտագործել է Ա. Շիրակացու տոմարական մատյանը, այդ թվում հոռմեական Շ-եակի շարքը: Նա թվականի կա-

<sup>1</sup> Գիրք Տօմարաց հայոց, հոօմայեցւոց եւ Պարզաթօմար, ի Մարգիլեա քաղաքի, 1708 թ, էջ 15, տե՛ս նաև Բուն Տօմար հայոց և հոօմայեցւոց, Պարզաթօմար, Կ. Պոլիս, 1795, էջ 19:

նոններում տվել է հայոց Մեծ թվականով հռոմեացոց Բուն, Ավագ, կամ Մեծ թվականը, հռոմեացոց Մեծ թվականով հռոմեացոց Փոքր թվականը, հայոց Փոքր թվականով հռոմեացոց Փոքր թվականն ստանալու կանոնները՝ վերջինս անվանելով Քննիկոն։ Դրանք հիմնված էին Շ-եակի 1-ին և 2-րդ շրջապտույտների վրա և առաջացել էին Շ-եակից։ Նա միաժամանակ 1094 թ. առաջին անգամ հռոմեացոց Փոքր թվականն անվանել է Քննիկոն։

Ստեփանոս Մեծրկա որդին իր տոմարական ժողովածոյի համար նյութեր է քաղել տոմարական երկից կամ ժողովածոյից՝ անվանելով «Ի Քննիկոնէ»։

Պարզվում է, որ «Ի Քննիկոնէ»-ն համարժեք է «Ի Շ-եակէ»-ինկամ «Ի Շ-ակ թուականէն», մանավանդ որ ժողովածոյում բերված նյութերից մեկում Շ-եակ շրջան, Քննիկոն և հայոց Մեծ թվական, որն առաջացել է Շ-եակից, համարժեքներ են, ուստի հայոց Մեծ թվականի (կամ տոմարի) ժողովածուն 1126 թվականին ընկալվել է իբրև Քննիկոն, որի գուգահեռը Շ-եակն է։

Համենայն դեպս Անանիա Շիրակացու տոմարական մատյանը և դրա վերնագիրը՝ տարբեր բնորոշումներով, 9-րդ դարի 60-ական թվականներից մինչև 12-րդ դարի 20-ական թվականների 2-րդ կեսը, ընկալվել է Շ-եակ մատյան կամ պարզապես Շ-եակ, իսկ Ասողիկից (1005 թ.) սկսած՝ Քննիկոն կամ Մեծ Քննիկոն համարժեքն է ստացել։ Ա. Շիրակացու Շ-եակ մատյանի կամ Շ-եակի Քննիկոն գուգահեռի գիտակցությունը պահպանվել է մինչև 17-րդ դարի վերջը 18-րդ դարի սկզբները, երբ Դավիթ Բաղրամին տոմարական ժողովածուն բնորոշել է իբրև «Անանիայի Քննիկոն»։

1094 թվից մինչև 18-րդ դարի սկզբները Քննիկոն տերմինը մասնավորեցվել է հռոմեացոց և հայոց Փոքր թվականների համար՝ իբրև Շ-եակի 2-րդ շրջապտույտի թվականներ։ Այսպիսով, Անանիա Շիրակացու տոմարական-տոնացույցային մատյանի վերնագիրը կարող ենք վերականգնել՝ «Անանիայի Շիրակացույց (Շիրակունւոյ) համարողի ՇԼԲ կարգ»։

Ի դեպ, գրաբարում ՀԱՄԱՐ(ող) տերմինն ունեցել է բազմաթիվ համարժեքներ, որոնց թվում թուականութիւն, հաշոելն, հաշիվ ժամանակաց և թոոց, կարգ, շարք, ուստի համարող նշանակել է թվականության կարգող (համարող), կարգող (հաշվող) ժամանակաց, թոոց, որով բնորոշել են Անանիա Շիրակացուն՝ իբրև մականուն, որը դրսեռորվել է տոմարական-տոնացույցային ժողովածոյի ենթավերնագրերում։ Իսկ կարգողը դրսեռորվել է, ինչպես կտեսնենք, իր տոմարական-տոնացույցային մատյանի բազմաթիվ էջերում։